



• ԵՐԾՈՒՒ

## ՎԱՍԿՈՒԴԱԿԱՆ

ԹՈՒՌՅԵԱՆ ՀԱՅՐԵՆԱՄԻ ԹԵՒՕՐ  
ՅԱՐԺՈՒՆԻ ՄԵՆԱՍԽԱՆԷՆ ՎԱՐԵԳԱՅ

ԽՄԵԼԳԻՐ ՀԱՅՐԵՆԱՄՕՍ  
ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՐԻՄԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԻ

ՆՈՅՄԱՐԵՐ 1858 • ԹԻՒ 11 •

ՋԱՆՏՈՍԳ

Ի ՏՊԱՐԱԿԻ ՎԱՍԿՈՒԴԱԿԱՆ ԱՐԺՈՒՌՅԱՆ

Ի ՎԱՐԵԼԻ





ԵՐԾՈՒՒ

ՎԱՍԳՈՒԲՐԵԼՆ

ԹՈՒՌՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԹԵՒՕԲ  
ՅԱՐԻՈՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԷՆ ՎԱՐԱԳԱՅ  
ՈՐ ԴՎԱՆՏՈՍՊ

ԱՎԱՆԴԵՍ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ  
ԵԿԵԶԵՑԱՇԷՆ ՀԱՐՅՆ

ԵԶՆԻԿ ԿՈՂԱՅԻ ԸՆՏԻՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՀԱՅՈՑ

Բանաւոր դրախտ իմն Հայաստան ակօսաբեկ մշակեալ եր-  
կամբք քրանաջան վաստակաւոր հարցն սրբոց մեծին Սահակայ  
եւ Մեսրոպայ, բուսոյց նախ անդրանիկ պառուղ օրհնութեան  
պբանքելին ԵՂԻ՛. որոյ վասն բերկրեցեալ գոչէր առ բովանդակ  
ծնունդս իւր ասելով, ձմեռն տգիտութեան եւ նախապա-

շարման էանց անձրեւք եւ մառախուղք կռամուլ բարբարոսութեան գնացեալ յոյժ ի բաց մեկնեցան : Արի՛ք ելէք հարազատ ծնունդք մայրենի ծոցոյս , մտէք ի լոյս իմաստութեան , բարեբարոյ մանկունք իմս սիրասունք . ճիսարար ճեմեցէք ի տաճար Յունական եւ Ասորական իմաստութեան , ժողովել յայնց զճաղկունս անմուտ լուսաւորութեան :

Յայս յորդոր խրախուսանաց վարժուցեալ իմաստասէրն Վռամշապուհ թագակալ Արքայ Հայոց ի մեծն Սահակ եւ Երանեղիս Մեսրոպ հայեր . եւ նոքա իսկ նովին անճառ խանդաղատանօք առ վէհն Արքայ ակնապիշ մնային , ամենեւին համամիտք համակարիք եւ նման դիպեալք իրերաց . մին իշխանական սաստի հզօր գաւազանաւ , իսկ միւսն Աստուածեղէն բոբբօրքեալ լուսով եւ ժրաջան աշխատութեամբ , ապաստեալ հերկել զսովանդակ հայրենի տուն եւ յօժարակամ սերմանել զբանալի ցորեանն լուսաւոր բանգխութեան :

Այր վասն սիրողաբար խորհուրդ ի մէջ առեալ վէհ հայրենասիրաց՝ հասուն դատողութեամբ . որոշեն նախ առաջին զբաժուչմն Եւթիկ ընդ Յովհաննու Պաղնացւոյ Ասորիս առաքել ի Միջագետս՝ ուր ամբարեալ կային յայնմ ժամանակի հնավէպ պատմութիւնք ցեղապետութեան Հայոց ի լեզու եւ ի գիր Ասորի . նա եւ պատմութիւնք վարուց ճգնողական հանդիսի երանելի սրբոց հարցն Ասորոց . որպէս Յակոբայ Մծբնացւոյ Եփրեմի եւ այլոց , թարգմանել զայնս ի լեզու եւ ի նորագիւտ գիր հայացի :

Արդ մինչ երկօքեան սոբայ հասեալ անդր ի միջագետս Ասորոց արիաջան աշխատութեամբ ի նոյն գործ թարգմանութեան պարապէին , լուր առեալ ի բարեկամաց իւրեանց թէ Յովհան Եկեղեցացի եւ Արձան Արծրունի դասակիցքն իւրեանց՝ ի թագաւորէն եւ հայրապետէն նոյնոյ փութով յուղարկեցան ի Ա. Պօլիս . զի լաւապէս վարժեցին անդանօր ի Հելլենացի գպրութիւն եւ պարապեցին ի թարգմանութիւնս ընտիրս Յունականէ ի Հայ : Ինքեանք եւս ի նախանձ բարի շարժեալ ըստ ակնարկելոյ վեհագոյն վարժապետաց իւրեանց ,

Թողեալ զՎսորիս հապճեպ 'ի Սոստանդնուպոլիս հասեալ առ ընկերակիցս իւրեանց ժամանէին. ընդ որս միացեալ՝ ամենայն ջանասիրութեամբ ձեռն 'ի գործ արարին ժրածիր պարապիլ 'ի վարժս Հեղենացի եւ 'ի Թարգմանութիւնս ընտրելագոյն գրոց :

Փայլեցաւ 'ի պաշտօն գրաւոր աշխատութեան երանելիս Եւթի ընդ այլ ընկերակիցս իւր. այն քան՝ մինչ զի զարմացոյց զբազումս 'ի հոգեորացն Յունաց եւ գտաւ սիրելի եւ պատկառելի յաչս բազմաց : Որոյ վասն եւ յաւուրս Եփեսոսի Սուրբ Ժողովոյն 'ի դիմաց բոլոր Հայ ազգիս լռութեան Երեսփոխան յատկացեալ ընդ այլ ընկերակիցս իւր մատոյց մեծին Սիւնհոգոսին յինքն հաւատացեալ զթուղթ դաւաճութեան հայաստանեաց սուրբ եւ ուղղափառ Եկեղեցւոյ : Եւ իբր փոխանորդ Լուսաւորչական մեծի աթոռոյ պատիւ ընկալեալ 'ի Սուրբ Ժողովին ; 'ի գիր դրոշմեալ զամենայն վեճիւս եւ կանոնս նոյնոյ սուրբ եւ տիեզերական Սիւնհոգոսին, 'ի Հայս առ երանելի սուրբ Հայրապետն Սահակ պարթեւ առաքէր : Իսկ ինքն յետ կալոյ յայնտօիկ կողմանս ընդ ընկերակիցս իւր ժամանակս ինչ եւ յետ լիովին 'ի ձեռս բերելոյ բազմապատիկ տաղանդս ուսումնասիրական բանից, դարձ ընդ այլնս արարեալ 'ի հայրենիս ժամանէր. ուր եւ վասն իսկապէս արժանաւորութեան իւրոյ՝ ընտրի լինել Եպիսկոպոս մեծի վիճակին Բագրեւանդայ : Ապա իբրեւ քաջ հովիւ սկիզբն առնուա խնամ տարածել 'ի վերայ իւրն հաւատացեալ բանաւոր հօտի եւ արածել զնոսին յարօռս Առողաւածային պատուիրանաց : Սոյն սա եւս իբրեւ Թեմական արհի Եպիսկոպոս գտաւ 'ի մեծ ժողովն Աշտիշատու, ուր ընդ այլ Եպիսկոպոսունանս եւ բովանդակ եկեղեցական դասու արար պատասխանի մոլորամիտ Թղթոյն Հազկիւրտի, զօրաւոր բաժնաբանութեամբ. որպէս է տեսանել 'ի զիրս երանելոյն Եղիշէիս յեղանակն երկրորդ : մանաւանդ զի սորայս համարի մտաց ծնունդ հրաշալին զայն վարդապետութիւնն նամակագրութեան. զի ոչ հեռի ինչ եւ բանք եւ միտք նամակագրութեանն 'ի բուն գրուածոց Աս-

տուածաբանիս Եզնկայ, զորս կարգեաց ընդ դէմ քէշին Պարսից. զորմէ ունիս տեսանել 'ի գիրս Նոյնոյ Եզնկայ 'ի գիրք. Բ.:

Արար սա չորս յատուկ գիրս եղծ աղանդոց լուսաւոր վարդապետութեամբ : Ա . այն է՝ եղծ աղանդոյն հեթանոսաց. Բ . Եղծ քէշին պարսից. Գ . Եղծ կրօնից յունական իւմաստասիրաց. Դ . Եղծ աղանդոյն Մարկիոնի : Զսոսայ չորեսին 'ի մի ժողովեալ յանուն բարեացապարտ հեղինակին կոչեցաւ Եզնիկ կամ Եզնակ : Ո՞՞մատենագիրս հոյակապ եւ վսեմ հայկաբանութիւնն անգուգական , իմաստն բարձր եւ բաւ տաբանութիւնն զօրաւոր Ատուածաբանական եւ ընտիր. մանաւանդ 'ի գիրս առաջին . որոյ մի հատուած բանի աստանօր պատկերացուցանել մի աւելորդ համարեցի , որ է

» Յորժամ զաներեւութեն եւ զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ որ , բանգի մարմնաւոր լեալ է , պարտի զմիտս յստակել եւ զխորհուրդս սրբել , զյոյզս շարժմանց պարզել , զի յայն զօր առաջի եդ՝ հասանել կարացէ : Նա եւ որ զճառագայթս արեգականն հայել կամիցի , պարտի ըզպղտորութիւնն աչացն՝ զազտն եւ զբիժն 'ի բաց պարզել , զի մի մթաբն՝ որ զբբբն շողայցեն , արգել հայելոյ 'ի յստակութիւն լուսոյն լիցին :

Եւ արդ բանգի մի էութիւնն անքննին է եւ անհաս բընութեամբ , առ նորա անքնութիւնն ընծայութիւն անգիտութեան մատուցանելի է , եւ առ էութիւն նորին դաւանութիւն գիտութեան եւ ոչ բնութեան : Զի որ էն՝ պարտի զի մշտնջենաւոր իցէ եւ անսկիզբն , որոյ ոչ սկիզբն յումէքէ առեալ լինելոյ , եւ ոչ ունի զոր 'ի վեր քան զինքն , զոր պարտ իցէ նմա պատճառ կարծել կամ իմանալ՝ եթէ 'ի նմանէ իցէ առեալ սկիզբն էա՞լալոյ : Զի ոչ որ է առաջին քան զնա , եւ ոչ որ է յետոյ նման նմա , եւ ոչ ընկեր հաւասար նմին եւ ոչ էութիւն հակառակ նմա , եւ ոչ գոյութիւն ընդդիմակաց , եւ ոչ բնութիւն հիւթաբեր 'ի պէտս նորա , եւ ոչ նիւթինչ՝ յորմէ առնիցէ զոր առնելոց իցէ . այլ ինքն է պատճառ ամենայնի , որ 'ի լինելն եւ գոյանալ եկին 'իչգոյէ եւ 'ի գոյէ .

որպէս երկինք վերինք եւ որ ինչ յերկինս , եւ երկինք երեւելիք որ 'ի Զուրյ . եւ երկիր , եւ ամենայն 'ի նմանէ եւ 'ի նմա . յորմէ ամենայն , եւ ինքն ոչ յուսմբէ : Որոյ ըստ իւրաքանչիւր կարգաց տուեալ է սկիզբն լինելոյ աներեւութիցն անմարմնոց եւ երեւելեացն մարմնաւորաց . որ բաւականն է որպէս 'ի տալն զկենդանութիւնն , նոյնպէս եւ 'ի գիտութիւն իւրոյ անարար էութեանն ժամանեցուցանել , եւ յիւրոց պարաճոցն 'ի հաստումն ըստ իւրաքանչիւր բնութեանց ածել : Որ ոչ այնու միայն զարմանալի է , զի ածն 'ի չգոյէ 'ի գոյ զւգոյսն , եւ եցոյց յոչնէ յինչ զէսն , այլ զի եւ աւարատ եւ անխախտու պահէ զլեալն . որոց եւ յառաջնութիւն իսկ աննախանձ եղ զկենդանութիւնն , առ 'ի յայտնելոյ զիւրոյ զբարեբարութեանն հանդէս :

Քանզի ոչ եթէ կարօտ ինչ որ իւրիւր էր , եթէ վասն այնուրիկ խնայիցէ՝ իւր մինայնոյ սեպհականեալ զկենդանութիւնն . եւ անզոր եւ տկար , եթէ զանձին եւ եթ խորհիցէ զզօրուութիւնն : Եւ ոչ նիաղ 'ի գիտութեանէ , եթէ ինքեան եւ եթ պահիցէ զգիտութիւնն , եւ ոչ կարօտ իմաստութեանէ , եթէ յորժամ այլոց բաշխիցէ զիմաստութիւնն իւր , կարծիք ինչ կարօտութեան 'ի ներքս մտանիցեն : Այլ կենդանի է եւ աղբիւր կենդանութեան . տայ ամենայնի կենդանութիւն , եւ ինքն կայ լի եւ յանապառ կենդանութեան . եւ զօրացուցանէ զանզօրս մեծազօր զօրութեամբ , եւ ինքն ոչ թերանայ 'ի զօրացուցիչ զօրութենէն . եւ պարզեւէ գիտութիւն ամենայն անգիտաց , եւ ինքն բաւանդակ ունի յինքեան զամենագէտ գիտութիւն . եւ բոլրէ յամենեւսին զանպակաս իմաստութիւնն , եւ ինքն մնայ անխախտ յամենահնար իմաստութեանն :

Եթէ աղբերք մշտաբուլիք , որք 'ի նորա հրամանէ կարգեցան , հանապաղ բոլրեն եւ ոչ պակասեն , որոց բոլրէ մոռնին զայլոց կարօտութիւնն ընուն . եւ ինքեանք 'ի նմին յորդութեան կան մշտնջենաւորք . հրապի եւս առաւել այն՝ որ նոցա զյորդութիւն բոլրմանցն յորինեաց , որ աղբերքն է

բարութեան . որ զամենայն զոր արար գեղեցիկս արար . այսինքն  
զբանաւորս , եւ զանբանաւորս , զմտաւորս եւ զանմտաւորս ,  
զխօսուէնս եւ զանխօսուէնս , զասուէնս եւ զանասուէնս : Եւ բա-  
նաւորաց եւ մտաւորաց յիւրաքանչիւր առաքինութեանց կար-  
գեաց ստանալ զբարութիւն , եւ ոչ զգեղեցիկութիւն : զի գե-  
ղեցիկութեան տուիչ ինքն է , եւ բարութեանն՝ զանձնիշխանու-  
թիւնն արար պատճառ . . . . » :

Գեղեցիկ են երանելոյս եւ հեղ նական ձեւք , որովք ուժ-  
գին յարձակի՝ ի կշտամբումն . Բէշին պաւսից՝ այսպիսի ծաղ-  
րաբանութեամբ :

» Ո՛վ մորոտութիւն . չեւ ուրեք որդի ՚ի միջի , եւ նա չը-  
յղացելոյն եւ չծնելոյն անուն դնէր : Ամենայն ծննդոց յետ  
ծննդեանն դնին անուանք , եւ նա զկարգ յառաջ քան զծնա-  
նելն դնէր նմա անուն Որմիգդ . բաց թէ հաւատայր՝ թէ  
եւ արդարեւ լինէր նմա որդի . եւ եթէ հաւատայր՝ ընդէր երկ-  
մտեաց , եւ եղեւ երկմտութեամբն պատճառ ծննդեան Արհմե-  
նի , ուստի չարիքն յաշխարհ մտին : Եւ այն են զարմանք՝ զի  
մինն ՚ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր եւ միւսն  
յառժամայն յերկմտութենէ անտի :

Դարձեալ որ զայն գիտաց՝ եթէ երկու որդիք են յորո-  
վայնի անդ , զայն ընդէր ոչ ծանեալ թէ մինն բարի եւ միւսն  
չար : Եւ թէ զիտաց եւ ոչ եղծ զչարն , ինքն է պատճառ  
չարին . ապա թէ զայն չգիտաց , զիարդ իցէ հաւատալի եթէ  
զմիւսն ծանեալ . եւ եթէ յայնժամ ոչ իմացաւ , յորժամ  
խաւարին եւ ժահահոտ ետես զնա՝ եւ յայնժամ արդեօք  
ոչ՝ գիտաց : . . . » :

Լեալ են երանելոյս նա եւ այլ զբաւոր աշխատութիւնք  
անպատճառ : Բայց ժանկք անդուծ ժամանակին ՚ի կուր  
արկեալ՝ չետուն մեզ փայելել ՚ի լոյս նոցին եւս : Իսկ որ այժմս  
՚ի ձեռս պատրաստ գտանի՝ նա եւս բաւական է զօրեղ փայ-  
լեցուցանել զհանդէս յիշատակի լիահանձար եկեղեցաշէն հօրս  
Եզնկայ . որ Աստուածային վրէժնդրութեամբն վառեալ առ  
ոտիւքն զ-Բէշս հեթանոսացն արկեալ , կոխտելով հեգնելով եւ

ծաղրաբանելով ջնջէ եւ տապալէ զկարծեցեալ զօրութիւնն նոյնին 'ի սրտից այնց՝ որք թերամտեալ էին թէ իցեն ինչ : Եւ բարձրացուցեալ զեղջիւր Սուրբ եկեղեցւոյ պատկառելի կացոյց յատեանս իմաստնոցն Յունաց եւ ունայնապաշտիցն Պարսկացնոց :

Այսպիսեօք փայլեալ սորին 'ի հանդիսի Աստուածպաշտութեան եւ կացեալ զժամանակս երկար 'ի Բագրեւանդ գաւառի յեպիսկոպոսական բարձր իշխանութեան, յետորոյ կնքէ զաւուրս ցանկալի կենաց իւրոց եւ բերեալ հանգուցանի սրբանեալ մարմինն յիւրն իսկ հայրենի տան 'ի բաղաբադիւղն Ողոք, որ կայ 'ի սահմանս Երասխաձորոյ : Որոյ դիր հանգստեան մինչեւ ցայս օր մեծարանօք պատուի 'ի բովանդակ Հայ որեւից, որպէս պատմեն բուն իսկ ականատեսք :

( ) Նուրեմն մանկտի հայոց զաջս 'ի վեր կալլիր՝ տես դու աստանօր հանդէս Աստուածպաշտութեան երանելոյս, թէ քանի զօրաւոր ուժեղնութեամբ անձնադիր յարձակի 'ի պաշտպանել սուրբ եւ ուղղափառ եկեղեցի իւր, եւ իբր քաջամարտիկ ախոյեան եկեղեցւոյ Աստուծոյ զհայեցուածս իւր 'ի չորս բաժանեալ յարձակի անվեհեր վստահութեամբ 'ի վերայ մէն մի մոլորութեանց իւրական ժամանակի, եւ հատու սուսերաւ զօրեղ բանից իւրոց՝ քէշաքէշ պատառեալ եւ սրախողիտղ արկեալ զՅոյնն, զՊարսիկն եւ զայլս : Իսկ ինքն անընկճելի կայ եւ մնայ : Քեզ օրինակ լիցի հայրապետիս սրբոյ վարուց յիշատակ, մի բնաւ վերջանալ բանիւ եւ գրով 'ի պաշտպանել զեկեղեցիդ սուրբ եւ անձնադիր մարտնջել ընդ թշնամիս նորին : Ան խառն եւ Սուրբ է մայր քո Աստուղիկէ Սուրբ Էջմիածին՝ ընդ որով կաս ծուարեալ, ոչ բուսաւ յորդոց նորին ժառանգ կորստեան մոլորամիտ հերիտիկոս ոք մինչեւ ցայս թիւ ժամանակի, եւ չունի բուսանիլ 'ի յաւիտեան, Աստուածահաճ խնդրուածովք Սուրբ Հայրապետին իւրոյ մեծին Գրիգորի : Անքեցաւ Եկեղեցի Հայաստանեաց՝ բանիւ սրբոյն՝ որ անաց : “ Աստ թշնամբ մի՛ զօրացին մի՛ հերձուածոց աղանդ բուսցին ” ( 'ի շարականի Եօթն խոտաճարակաց : )

Հաւատամ գի չունի եւ չգորէ որ պիղծ լուծանել զայս  
կնիք մինչեւ ՚ի գալուստն Բիւտոսի եւ ՚ի վախճան աշխարհիս :

\* \* \*

## Բ. ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱԸԼԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՑ

ԵՐԿՐՈՐԻ ԱՐՏԱԸԼԷՍ ԱՐԸԱԿՈՒՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՂ ԵՒ ՊԱՆՑԱԼԻ  
ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ :

Արդարեւ բազում գովութեանց փառաւոր արձանաց եւ  
արձանագրութեանց արժանի է այն բոլոր քաղգին պարծանք  
եղող ՚իշարահայրենաշէն առաքիլնեաց գերազանցեալն առա-  
ւել քան զամենայն թագաւորս Հայոց , բաղմութիւ եւ բաղ-  
մատեսակ բարեկարգութեամբ գիտութեամբ եւ վայելչու-  
թեամբ զարդարողն զՀայաստան իմաստախոհն Արտաշէս . եւ  
եւս յաւիտենական պանծալի յիշատակաց արժանի է զիւ-  
ցազնոյս անվեհեր եւ անպարտելի քաջութիւնը որ , ինչպէս  
մեր խորենացի քաջ պատմագիրը կը նկարագրէ ըսելով թէ .  
Երբոր Ալանք լեռնական բարբարոսներուն հետ միանալով  
բաղմութեամբ Հայաստանի մէջ տարածուեցան , Արտաշէս  
իր հաւատարիմ բաշտաբազուկ եւ հսկայ նախարարները ժող-  
վելով՝ ահագին պատրաստութեամբ վազեց արշաւեց թշնա-  
մեաց վրայ՝ եւ սաստիկ կերպով պատերազմած ժամանակը ,  
Հայկազուն տիրաւոր քաջ զօրքերը Ալանաց թագաւորին որ-  
դին գերի բռնելով , իրենց քաջաւիրտ զիւցազն արքային տա-  
րին : Ահա այս մեծ կորուստովը թշնամուոյն սիրտը այլայլելով  
յուսահատեցաւ՝ եւ տկարութիւնը վրան տիրելով սկսեց հաշ-  
տութիւն խօսելու զթշնամներ ցրցունել՝ եւ երգումով ու  
ղաշամբ խաղաղութիւն հաստատել ուզեց . այն պայմանաւ

որ ինչ որ ուզէ տայ , եւ անկէց ետեւ չյանդգնին Ալանք  
Հայոց երկրին մէջ մոնալ եւ ասպատակութիւն ընել : Բայց  
երբոր Արտաշէս այս հաշտութեան յանձնառու չըլլալով գերի  
բռնուած որդին ետ չտուաւ , ան ատենը նոյն որդւոյն քոյրը  
գետին եղերբը եկած բարձր տեղ մը կայնելով թարգմանով  
սկսեց դէպ 'ի Արտաշիսի բանակը բարձրաձայն զուրցել .

« Բեզ ասեմ , այր քաջ Արտաշէս , որ յաղթեցեր քաջ ազգին  
Ալանաց . եկ հաւանեաց աչադեղոյ դատերս Ալանաց՝ տալ  
զպատանիդ . զի վաւն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանոց զայ-  
լոյ դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն , կամ ծա-  
ռայեցուցանելով եւ 'իստրկաց կարգի պահել , եւ թշնամու-  
թիւն յաւիտենական 'ի մէջ երկոցունոց ազգաց քաջաց հաս-  
տատել » : Արտաշէս այս կուսին իմաստալից խօսքերը լսե-  
լով , եւ անոր գեղեցկութեան ըցանկանալով՝ իրեն դայեակ եւ  
զոյ Ամբատ իշխանը Ալանաց թագաւորին խրկեց որ , իր այն  
Սաթենիկ աղջիկը իրեն կնութեան տայ , եւ անոր գերի բռնու-  
ած որդին ետ տուաւ եւ խաղաղութիւնը հաստատեց : Թա-  
գաւորն ալ իր աղջկանը չնաշխարհիկ գեղեցկութիւնը եւ մի-  
անգամայն ազնուական ցեղէ ըլլալուն վրայօք պարծենալով ,  
Արտաշիսի մեծ պալատէ մը ըրած ըլլալը ցըցունելու համար  
ըսաւ կրտսէ Խորենացին թէ . « Եւ ուստի՞ տացէ քաջն Արտա-  
շէս հազարս 'ի հազարաց եւ բիւրս 'ի բիւրուց ընդ քաջազգոյ  
կոյս օրիորդիս Ալանաց » :

Եւ ասոր վրայ Հայք առասպելաբանելով կերգէին կրտսէ Խո-  
րենացին այսպէս . թէ « Հեծաւ արի արքայն Արտաշէս 'ի-  
սեաւն գեղեցիկ , եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն , եւ  
անցեալ որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն , եւ ձգեալ զոս-  
կէօղ շիկափոկ պարանն՝ ընկէց 'ի մէջ օրիորդին Ալանաց , եւ  
շատ ցաւեցոյց զմէջ փափուկ օրիորդին , արագ հասուցանե-  
լով 'ի բանակն իւր » : Բայց ճշմարիտը այս է որ կրտսէ , որով-  
հետեւ կարմիր մորթը եւ լայքան այսինքն տեսակ մը կար-  
միր ներկը՝ Ալանաց մէջ աւելի յարգի ըլլալուն համար , Ար-  
տաշէս շատ մը ոսկիներով աղջկանը համար անոնց ընծայ խը-

կեց. Ահա այս է ոսկեօղ շիկափոկ պարան ըստածը. այսինքն ոսկի օղ ( հաւքայ ) կարմիր կաշիէ պարանը : Եւ դարձեալ կերգէին կըսէ թէ , « Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաշիսի , տեղայր մարդարիտ 'ի հարսնութեան Աւթին. կանն : Որովհետեւ մեր թագաւորներուն սովորութիւն էր փեսայութեան ժամանակը ինչպէս որ կընէին Հռովմայեցւոց հիւպատոսները տաճարին դուռը հասնելուն պէս ստակ կըցըր. ուէին , նմանապէս թագուհւոյն առաքաւորին մէջ ալ մարգրիտ կը սփռէին : ( 1 ) Ահա այս է երգին ճշմարտութիւնը կըսէ :

Արդարեւ Արտաշէս թագաւորի մը պէտք եղած ըտլոր կատարելութիւններն ունենալով , իր հզօր զօրութիւնը ընդ հանուր ազգին բարութեանը հանգստութեանը եւ վայելչութեանը համար գործածեց , որն որ աղէկ զիտցաւ թէ ազգ մը ազգ ընողն՝ եւ անոր փառքը պարծանքը աւելցնող եւ երեւելի ընողը անոր թագաւորն է : Ահաւասիկ այս այն իմաստուն հայրենաշէն առաքինին էր որ , աշխարհիս երեւի քաղաքները պատող եւ բիւրաւոր հոյակապ շէնքեր տեսնող՝ ու հնարագէտ ճարտարապետներու աշակերտող ծարտաւախտի մը նման , ըտլոր աշխարհի մէջ մէկ հատիկ զարդարուն պալատ մը դարձուց զՀայաստան . չկար անանկ բարութիւն մը՝ յառաջադիմութեան եւ լուսաւորութեան միջոց

( 1 ) Կերեւայ թէ այս ստակ մարգրիտ ցրուելու սովորութիւնը միայն թագաւորներուն կը վերաբերէր , թէ եւ հաւանական է որ նախարարներն ալ կընէին . վասն զի անոնք ալ իրենց վիճակաւը եւ զգեստովը թագաւորէ մը վար չէին ֆօրս , եւ ասիկայ թագաւորի եւ իշխանաց յատկացեալ պատուածք սովորութիւն մը ըլլալուն համար կը կարծուի որ՝ հասարակ ժողովրդոց հարստանայ մէջ այս արարողութիւնը 'ի գործ դնելու հրաման չկար . Բայց երբ տերութիւնը կործանեցաւ՝ հարցնող վնասող չըլլալով , ազգին մէջ սովորութիւն եղաւ փեսային մէջքը թուր կախելը ստակ ցրուելը որ , թէ հարսանեաց զարդ մը ըլլալու համար՝ եւ թէ մահաւանդ իրենց ցաւալի կորուստին յիշատակովը միտթարուելու համար եղած ըլլալու է : Այս բանը մինչեւ այս դարուս մէջ ալ կար , Բայց քանի որ ցրուելու յարմար եղած ստակին փոփոխութիւնն որ եղաւ՝ բնականաբար խաբանուեցաւ , եւ հիմայ գրեթէ ասոր պէս ծախքի վերաբերեալ չատ մը սովորութիւններու հետ մէկ տեղ ընդհանրապէս վերցուած է թէ փեսային մէջքը թուր կախելը՝ եւ թէ ստակ ցրուելը :

եղող առարկայ մը որ՝ իր տէրութեանը եւ ազգին օգտին՝ պայ-  
ծառութեանը ու փառացը համար ՚ի գործ չգրաւ . չկար ա-  
նանկ զարհուրելի դեպք մը որ իրեն տկարութիւն կամ եր-  
կիւղ մը տալով՝ հայրենասիրական հօգօր պաշտպանութենէն  
զինքը ետ կեցնէր : Ահա թագաւոր մը՝ որ հարիւրաւոր հա-  
զարաւոր տարիներէ ետեւ թագաւորութեան մը ազգի մը եր-  
ջանկութեանը համար կատարելագործուելու կարօտ եղող  
պէտք եղած գիտութեանց հեղինակներուն մէջ սկիզբն եւ  
անդրանիկն եղաւ . որուն պատմութիւնը կարգացող տերու-  
թեանց իշխանաց եւ ընդհանուր մարդկանց մտացը ար-  
դեօք ռուսի լոյսեր տուած է . թագաւոր մը՝ չէ թէ մեծին  
Պետրոսի նման գնաց բոլոր Եւրոպայ բախելով եւ անոնց կատա-  
րելագործեալ վիճակէն օրինակ առնելով , եւ իրմէ առաջ եւ  
կած իմաստնոց վարուց գիրքերուն մէջ կարգալով սորվեցաւ այն  
բարեկարգութիւնները , վասն զի այն ժամանակը չկար այս պատ-  
րաստ ընտիր օրինակները . հապա ինքն մտածեց ինքն հնարեց  
գտաւ . թէ եւ Ասողարչակայ ալ դրած եւ խաբանուած կար-  
գադրութիւններն ալ վերստին ՚ի գործ դնելէ ետ չկեցաւ : Ա-  
հա այն սմէն հայրենասիրական առաքինի գործքերովը եւ իր  
անսոդիւտ մտացը հանձարովը , բոլոր Հայկազունք իսկապէս  
նախաձեռն օրինակ ըրաւ ամէն օտար ազգաց առջեւ , եւ իր  
հայրենիքը փառաց ՚ի փառս բարձրացուց . ինչպէս որ երանելի  
Խորենացին հայրենասէր արքայիս գիտութեանց արուեստից եւ  
երկրագործութեան ծաղկեցնելուն համար զատ զատ գլուխ-  
ներ կազմելով կը նկարագրէ թէ , Արտաշէս բազմաթիւ ազ-  
գաց սիրելի եւ ցանկալի ընելով զՀայաստան , հետեւաբար  
բիւրաւոր անթիւ մարդկամբ լեցուց զայն , տեղ եւ բնակու-  
թիւն տալով անոնց լեռներու հովիտներու ու դաշտերու մէջ  
բնակեցուց , եւ այն ընդարձակածաւալ եւ բնական բարեբեր  
երկրին մէջ բնաւ անմշակ տեղ մը չէր մնացած » կըսէ :

Արդարեւ իմաստասիրել արժան է այս տեղը որ , այն Եւ-  
րոպայի մշակութեան անյարմար ապարդիւն՝ ժամանակաւ ան-  
մարդաբնակ երկիրները որ , այն տեղի եղող ժրջան ազգերը

իրենց հնարքներովը եւ տաժանելի աշխատութեամբը այս օրս վան օրս բարեբեր ըրեր են, հապա որչափ եւս առաւել յարգի եւ ցանկալի է Հայաստանի հողը որ, իր բնական բարեբերութենէն զատ՝ իսկզբանէ հետէ մշակութեան ամենահարկաւոր արհեստը անկէց սկսուած ըլլալով, երկայն դարերով միլեօնաւոր անթիւ ազգայնոց քրտամբը եւ աշխատութեամբը մէջի եղած ոչ ինչ կոշտերէն եւ քարերէն ալ բոլորովին մաքրուած ըլլալով, առանց մեքենաներու եւ մեծամեծ աշխատութեան մշակելու կարօտ եղած երկիրը՝ այս օրվան օրս ազգայինք երեսի վրայ ձգեր են՝ ու օտարաց ժլատ երկիրներէն առատութիւն եւ հարստութիւն կը փնտռեն. այն երկիրը որ ժամանակաւ ամէն ազգաց ցանկալի էր, որուն ընծայած հարստութեանցը համար անթիւ օտարականներու բնական հայրենիք եղած էր :

Արեւմտեան իրաւունք ունին Հայկազունք իրենց սիրելի եւ սիրովնաշատ երկրին վրայ պարծենալու՝ ուսկից կը բլիւն մեղր եւ կաթն՝ արծաթ եւ ոսկի առաւել քան զԱմերիկայ :

Ահա այն մեծագործ եւ հայրենաշէն Արտաշէն էր որ՝ հրաման ըրաւ բոլոր գիւղերուն բնակչաց իւրաքանչիւր արտերուն սահման որոշուի, վասն զի Հայաստանն մարդկան բազմութեամբ լեցուած էր. եւ իր տերութեանը երկրին սահմաններուն վրայ ալ վայելուչ ձեւով քառակուսի՝ եւ վրանին պնակաձեւ փորուած քարեր շինուած պեանին հետ հաւատարմագրելով՝ անոնց իւրաքանչիւրին վերայ ալ աշտարակաձեւ գեղեցիկ շէնքեր կանգնեցնել տուաւ որ, Պարսկց Արտաշէն թագաւորին ալ նախանձը շարժելով ինք ալ օրինակ առաւ անկէց, եւ այս կարգադրութիւնը իրեն սեփականել ուզեց : Այս հանձարաւոր գիւտը ի գործ դրաւ Արտաշէն՝ թէ իր պալատանման հայրենեացը երեւելի զարդ մը ըլլալու համար, եւ թէ իր բոլորովին եղող բիրտ եւ անպիտան բարբարոս ազգաց ասպատակող եւ աւազակաբարոյ բնութեանը դէմ ընդ պառնացող անձայն պահապան մը ըլլալու, եւ թէ մանաւանդ բոլոր բարեկիրթ ազգաց առջեւ՝ կրթեալ եւ բարե-

կարգեալ պատկառելի ազգի մը տէրութեան մը երկրին նշան ըլլալու համար :

Ուրեմն՝ Հայկազունք սկիզբէն ՚ի վեր իրենց ունեցած քաղաքակրթութեամբը եւ բարեկարգութեամբը Ասիայի ազգաց ցանկալի օրինակ ըլլալով, իրաւունք ունին իրենց ազգին ազնուութեամբը պարծենալու :

Հարստացուց պանծալի եւ երջանիկ ըրաւ Արտաշէս աշխատասէր եւ բարակամիտ զազգն Արամեան, մեծամեծ գիտութեան արուեստից եւ վաճառականութեան ընդարձակ ասպարէզներ բանալով անոնց առջին. որոնք որ ինչպէս Ասիայի ուրիշ ազգերը՝ նմանապէս իրենք ալ գետի եւ ծովու վերայ նաւով ճանապարհորդութիւն ընելէն տեղեկութիւն չունէին. վարժեցուց զՀայկազունս մինչեւ հեռաւոր երկիրներ ալ երթեւեկելու որ, ուրիշ իրենց դրացի եզրղ ազգաց ալ թէ նաւարկութիւն ընելու եւ թէ զանազան կատարելութեանց ուսուցիչ եւ օրինակ եղան :

Ուրեմն իրաւունք ունին Հայկազունք ՚ի սկզբանէ հետէ իրենց բնական ուսումնասէր եւ բազմատեսակ երկնապարգեւ ձրիւք եւ կատարելութեամբ զարդարեալ ազգաւը պարծենալու :

Ահաւասիկ Հայաստանի մէջ ժամանակաւ եղած գիտութեան արուեստից երկրագործութեան եւ վաճառականութեան եռանդը յառաջագիւմութիւնները՝ այս օրվան օրս հայերէլի նման Եւրոպայի մէջ կը տեսնամք. աւանդ որ անոգորմ եւ դառն ժամանակին երկաթի սուրը՝ բազմաթիւ դարերով առաջ այսպէս ազնիւ ազգի մը ձեռք կատարելագործուելիք գիտութեանց շարունակութիւնը կտրեց՝ խանգարեց ու անբրեւոյթ ըրաւ. բայց այս օրվան օրս կը նայինք որ հրաշալի կերպով մը՝ ընդհանուր ազգին մէջ նոյն ուսման յառաջագիւմութեան սէրը իր սրտին մէջ արծարծուած է :

Ուրեմն սիրելի՛ է երջանիկ դարս. սիրելի է Հայաստան, սիրելի են բոլոր Հայկազունք :

Յիշաւի ընտիր՝ եւ երեւելի օրինակ պէտք է ըլլայ ազ-

գայնոց , հայրենաշէն եւ գիւցազն Արտաշիսի իր զանազան առաքինութիւններէն զատ ունեցած երախտագիտութիւնը , ինչպէս որ ըրած արդիւնքներն ալ մանրամասնաբար կը պատմէ երանելի Խորենացին . արդեօք այն ժամանակի Հայկազունք ալ նոյն ազնուական առաքինութիւնը տուայերէ՞ր էին թէ ոչ, եւ իրենց ոսկիէ արծան կանգնելու արժանի թագաւորնին ինչպէս փառաւորեցին : Խորենացին ճանչցան կրօն անոր յարգը, եւ Արիստոն փեղզացիէն առնելով կը նկարագրէ անոր թաղման հանդէսը ըսելով թէ . « Որչափ ամփոխութիւնք մեռան 'ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք եւ հարձք եւ մտերիմ ծառայք . եւ որպիսի շուք բազմադիմիս արարին առ 'ի պատիւ դիոյն , քաղաքական կարգօք եւ ոչ որպէս զբարբարոսս : Դագաղքն էին ոսկեղէնք , գահօքն եւ անկողիքն բեհեզեայ . եւ պատմութեանն որ զմարմնոյն՝ ոսկեթել . թագ կապեալ 'ի գլուխն, եւ զէնն ոսկեով առաջի եղեալ . եւ զգահօյլքն շուրջ՝ որդիքն եւ բազմութիւն աղգականայն, եւ առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք , եւ նահապետքն եւ նախարարութեանցն գունդք եւ միանգամայն զօրականայն վաշտք , ամենեքին կազմեալ զինու հանդերձ , իբր թէ 'ի պատերազմ ճակատիցին . եւ առաջի պղնձիս հարկանելով փողս, եւ զկնիսն ձայնարկու կուսանք սեւազդեսաք եւ սշխարող կանայք , եւ զհետ՝ բազմութիւն ռամկին : Եւ այսպէս տարեալ թաղեցին » :

Ահաւասիկ Հայկազունք իրենց երախտաւոր եւ սիրելի թագաւորնին այսպէս հանդիսաւոր կերպով թաղեցին, մինչեւ անգամ « Եւշուջ զգերեզմանաւն լինէին կամաւոր մահունք » կրօն : Ասոր համար է որ Գողթան գաւառի բանաստեղծները իբր թէ Արտաշիսի որդին Արտաւազդ՝ հօրը մահուան ժամանակը զուրպած . ըլլայ այս խօսքը . որուն համար առատպելաբանելով կերդէն եղեր թէ « Մինչ դու գնացեր, եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս զորպէս թագաւորեմ » : Այս խօսքէն կիմացուի՝ իբր թէ սրտաբեկ եւ միանգամայն նախանձաբեկ ըլլալով իր հօրը ամենուռն սիրելի ըլլալուն վե-

րայ , զուէն գացիր ու բոլոր իշխանաց եւ ժողովրդոց սրտերը  
քեզի հետ թաղեցիր , ես այս աւերակներուն վերայ լինչպէս  
թագաւորեմ կրօն : Արդարեւ այս երգը երգելու ժամանակը  
հիմայ է , որովհետեւ այս օրվան օրս բոլոր Հայաստան աւե-  
րակ է եղեր՝ աւանդ հազար աւանդ որ ոչ Արտաշիսին գերեզ-  
մանը՝ եւ ոչ ալ այն փառաւոր ազատագնեայ քաջածնունդ  
Հայկական վեհ սերնդոց սրտերը ուր տեղ թաղուած ըլլալը  
յայտնի չէ :

Տ. Կ. ԴԱԼՓԱԿՃԵԱՆ :

## Դ . ԲՈՒՐԱՍՏԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵՈՒՆՑ

« ԶՈՐ ԻՆՉ ՍԵՐՄԱՆԵ ԱՔ ԶՆՈՅՆ ԵՒ ՀՆՉԵՍՑԵ » :

Գաղափարացի Ս. 8

Թէ արտաքին բարոյականութեան վրայ շինուած բազմա-  
հատոր գրեանք եւ թէ Աստուածաշունչ պատգամք այս ան-  
հեղին վճռոյս վրայ միտքան հաստատուն են : Ասոր համար է  
որ Աստուած իւր ընտրած սիրելի Ազգն՝ ուրիշ անաստուած  
կռապարիշտ ազգ երէն որոշելէն ետեւ , զգուշութեան համար  
օրէնքներ կ'հաստատէ , որ ամէն չար գործերէ հեռու մնան .  
չինի թէ իւրեանց չար գործոց հատուցումն ըստանալով , նա-  
հապետական օրհնութեանցը զրկուած մնան եւ Բրիտանի  
դաւուսան իւրեանց օգուտ մը չունենայ : Եւ այն Օրէնքներն  
են ասոնք , « Մի սպանաներ , Մի սուտ վկայեր , Մի գողա-  
նար » եւ այլն : Ասոնց ետեւէն ալ՝ « Ակն ընդ ական , ա-  
տամն ընդ . ատաման , արիւն ընդ . արեան » եւ այլն : Որոնցմով

կամի հասկցնել թէ՛ թող չսէ մէկն թէ՛ իմ ըրած անօրէնու  
թեանս փոխարէնն չիպիտի դառնայ ինձի : Չէ՛ թող այնպէս  
չկարծէ . անպատճառ ինչ որ փնաս հատուցերէ՛ ուրիշին, նորին  
կրկնապատիկն դէպի ինքն դարձ պիտի առնէ :

Գեղեցիկ եւ իրաւամբ կ'գրէ գերահրաշն Սաղովմօն թէ  
« Անձն ամբարշտի ցանկանայ չարեաց, եւ ոչ դացէ յումեք.  
գողորմութիւն » արդար եւ ըստ օրինացն Աստուծոյ բանք :  
Արդեօք կրնայ ազատուիլ այն անձն, որուն որ սիրտը չարու  
թեամբ լեցուած է կ'խորհի միշտ անմեղին համար տեսակա-  
ւոր չարիքներ, կը գործէ ինչ որ իւր չար կամացը հաճոյ է .  
բայց իւր նպատակին պիտի հասնէ՞, քաւ լիցի ոչ բնաւ . կր-  
տեսնես որ մէկէն Աստուծոյ արդար դատաստանն կ'կապէ  
զանի եւ անհրաժեշտ հրամանաւ կ'ապառնայ ասելով « Խնդ-  
րեցէք վրէժս 'ի դմանէ՛՝ որպէս արարն արարէք դմա » :  
Երէմ. Ժ. 15 : Ո՞վ մեծի թշուառութեան, ինչ պիտի ընէ  
այն սարսափելի վայրկենին, եւ ոչ մէկ բան մը . ինչու որ՝ ինքն  
սերմանեց, հունձ հասած ժամանակին ալ իհարկէ պիտի բա-  
ղէ : Այս բարոյական անդրադարձութիւնս ամէն մէկ անձին  
յատկապէս պատահելուն համար, զգուշութիւն պէտքէ ամե-  
նէն աւելի : Քրիստոսի Տեսուն մերոյ խրատն ալ մեծապէս  
կ'զգուշացնէ ասելով թէ « մի դատէք, զի մի դատիցիք : զի  
որով դատաստանաւ դատէք գատելոցէք եւ որով չափով չա-  
փէք չափեսցի ձեզ » : Անիրաւ դատաստանն թէպէտ շատ  
կ'պատահի որ կ'յաջողի, բայց ոչ միշտ եւ յարատեւ՝ որուն  
ապացոյց միշտ կ'տեսնուի : Ո՞ր եւ իցէ դատաւորի անիրաւ  
կ'որած դատաստանն՝ օրմ չէ օրմը զինքը պիտի դատապար-  
տէ եւ աշխարհի առաջ խայտառակ պիտի ընէ : Իւրաքանչիւր  
անհատ իւր անձին, իւր տան եւ ընկերոջ շատ գործերու մէջ  
դատաւոր կարէ հանդիսանալ . զգուշ կենալու է արդարացի  
դատաստանաւ վճիռ տալու . իւր անձին ինչպէս որ կամի ընկե-  
րոջն ալ նոյնն պիտի խորհէ, Տէրունական վճռոյն համեմատ .  
անմոռաց իւր միտքը պիտի տպաւորէ թէ ինչ չափով որ չա-  
փէ նոյն չափով պիտի չափուի իւրեան : Թէ որ ըստ կանխա-

տես գիտութեանն Աստուծոյ այս աշխարհիս վրայ չպատահեցաւ ալ նէ, անտարակոյս Թող լինի որ դատաստանին օր-Քրիստոսի ահեղ եւ անաչառ դատաստանին պիտի քննուի եւ արդարացի յատուցումն պիտի ընդունէ :

Ինչպէս որ վերն խօսուեցաւ՝ արտաքին իմաստուններն ալ հաստատուն են այս բարոյականիս վրայ, որոնցմէ մէկն է Հրաթամանթ ըստած Լիկիոյ դատաւորն . որ երբ կամեցաւ այս փոխարինական տուժիս վրայ օրէնք մը հաստատել, այս ստիւաւաբառ բանս ըսաւ “ Զոր ինչ ո՞ր առնէ՝ զնոյն եւ իրէ ” : Ուրիշ այս վճռողական բանիս համար՝ նոյն ժամանակի բանաստեղծներ “ դատաւոր դատապարտ հոգեոց ” ըսին : Ինչ եւ իցէ իւրաքանչիւր ոք՝ ըստ օրինաց իւր ըրածին անդրադարձը պիտի ընդունէ . ինչպէս որ մինչեւ հիմայ յայտնի եղաւ եւ հետեւեալ օրինակներովս ալ պիտի լինի :

Կայէն՝ նախասկիզբն անիծեալ գործոյն սպաննութեան, երբ իւր անմեղ գառնուէ Աբել եղբայրն սպաննեց, մի Թէ փոխարէնն չնկալաւ . ո՞վ նորին Թշուառութեան . իւր մեծ բախտ մը կը համարէր Թէ որ իւր անօրէն գործոյն անդրադարձն ընդունէր . բայց ոչ . . . անիծեալ լինի իմ կեանքս ըսելով՝ երեքեալ եւ տատանեալ կը շրջէր . հազիւ Թէ իւր վրայ ալ Թապաւորեց մահուն մութ ստուերը, բայց այն ալ ոչ Թէ տուժ՝ հապա իբրեւ պարգեւ :

Կ'չարչարէր Եգիպտոսի Փարաւոն Թագաւորն Խորայէլի պանդուխտ ազգն . կարծելով Թէ պիտի կարօղանայ զանոնք բնաջինջ ընել : Ժամանակն շատ չերկարեցաւ, մէկէն անդրադարձ պատիժներն կուգան : Եւ այն որ աղիւսագործութեան յարգն կ'արգելէր, եւ նոյն Թուով աղիւսն կ'պահանջէր՝ վրէժխնդիրն Աստուած կարկառիւ եւ մօրեխիւ փոխարէնն կ'հատուցանէ : Անմեղ գառնուկներուն աղաղակը յերկինս կ'բարձրանայր՝ երբ որ Փարաւոնի խաւարայլին հրամանաւ Նեղոս գետին մէջը կ'խղղուէին : Ո՞վ արդարադատ վճիռ՝ իւրեանց անդրանիկներն մեռնելէն ՚ի զատ, ինքն իսկ Փարաւոն իւրեան խորհրդակցօք եւ զօրականօք Արամիւր ծովու ան-

դունդներուն կ'մատնուի, նոյն անմեղից վրէժը լուծելով :

Ընդրադարձն ընդունեց նա եւ Աստուածատեացն բէլ, երբ կամեցաւ Հայաստանը քայքայել եւ մեր Հայկ նահապետն իւր մտաց չափովն չափել, եւ նորին մարմինն Բարեւ լովնի հողերուն մէջ թաղել : Բայց ինքն իւր փորած խոր խորատն գլորելով՝ քաջին Հայկայ ձեռամբ կ'սատկի եւ Հայաստանի հողերուն մէջ կ'թաղուի :

Օրըր տեղ կաշխատէր Աժդահակ Մարաց թագաւորն հայոց թագապսակ Տիգրանին խորամանկութիւն ընելու . ինչու որ թէ բնական եւ թէ դրական օրէնքները դատախազ ունէր իւր անիրաւ գործոց, անոր համար խայտառակութեամբ մեծին Տիգրանայ հաստաբուն նիզակին պատառիկ կ'լինի :

Արդ՝ հաստատ էր եւ հաստաեցաւ մինչեւ հիմայ, թէ մարդ անպատճառ իւր գործոց հատուցումն պիտի առնէ. թէ աշխարհիս վրայ դրական օրինօք եւ թէ ՚ի հանդերձեալն անաչառ դատաստանի օրն :

Հետեւեալ առակս ալ այս մտաց վրայ խմանալով թող բաւական լինի լաւ մը հասկնալ, թէ մէկ մարդ մը ինչ որ ցանէ նոյնն պիտի քաղէ :

ԱՌԱՅ :

ՍԻՒՅԻ Է՝ ԲԱՂԷ :

Սիւսան այն սիրուն եւ քաղցրանուպ,  
կայր նրստեալ ՚ի բոյն ՚ի մէջ վարդենեաց.  
Բազէն չար թռուցեալ անդրը հասանէ,  
Զկեանս անմեղին բառնալ յարեւէ.  
Բայց բոյն սիւսակին անմուտ բնաւին,  
Ողբ են թշնամի կենաց իւր անձին :

Լիկեալ բազէի մերձ 'ի բոյն մօտի,  
 Չայնիւ քաղցրութեան առ նա բարբառի.  
 Ո՛վ վառեալ 'ի սէր քոյ քաղցր երգանաց,  
 Մընամ կարօտով սիրոյդ գըրկանաց.  
 Եւ սիրելիդ իմ եւ առիւ արագ,  
 Հնչեա՛ 'ի հոգիս քաղցրորդ եղանակ :  
 Տայ պատասխանի սոխակըն փոքրիկ,  
 Թէ երթ 'ի բաց յինէն էյ չարաձըճիկ :  
 Ս'ինչ խորհէր բազէն ըզմօւտըն ջարդել,  
 Չանմեղ ըզթռչնիկն գէշ գէշ պատահել.  
 Իւր կենաց լուծիչ նետըն ժամանէ,  
 Ձըգեալ 'ի կենաց 'ի մահ գըլորէ :  
 Այսպէս զոր խորհէր անմեղ սոխակին,  
 Իւրոյն կարճեցին աւուրք դեր նըմին :  
 Ս'ի խորհիր ըզչար ընկերիդ կենաց,  
 Կենդանիդ անմահ հոգւով պերճացեալ.  
 Չոր կամիս այլոց 'ի քեզ դարձ առնէ,  
 Անմահ ըզհոգիդ վերօք խըխայթէ :

ԱՐԼԱՄ. Ա. ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱՂԱԿԵՐԳ  
 ԺԱՌԱՆԳԱՆՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ :

---

Ե. ԹԱՆԴԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

---

ՔՆԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես դալար ծառ մի տնկեալ 'ի Հայկայ,  
 Պտղաբերութեամբ ինձ նման չկայ.  
 Չեմ ես սնափառ իբրեւ սարդենի,

Հողմն ատելութեան փշեաց, ես անկայ.

Ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, զի նորոգեցայց :

Քաղցրահամ պտուղ իմ էր անքանակ,

Չաշխարհ լիացուց երկար ժամանակ,

Ոստք իմ եւ արմատք ՚ի բնէ խղեցան.

Դառն ատելութեամբ՝ անտուր, անդանակ.

Ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, զի նորոգեցայց :

Տերեւք իմ կանաչք վաղ թառամեցան,

Երակք անդամոյս ՚ի ջրոյ քամեցան.

Աղբէն իմ քնքուշ որդեակիւր եղեւ,

Գուցէ այդ եպանք այսպէս կամեցան.

Ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, զի նորոգեցայց :

Ի գալ ամարան ազգ իւրաքանչիւր,

Յնծալով փութայ քաղել զայգին իւր.

Իսկ աղբն Հայկայ ձեռն ՚ի ծնօտի

Աւաղէ, հոսէ արտասուաց աղբիւր.

Ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, զի նորոգեցայց :

Սէյադն ազգասէր յազգէն բամբասէր,

Գիշեր եւ ցերեկ ողբալով ասէր.

Հայք գիտող կարեն ճաշակել զպտուղ,

Չի չունին ( քաջ սիրտ նախնի զիւցազանց ) :

Ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, ո՛ւր է սէր, զի նորոգեցայց :

ՊԵՏՐՈՍ. Տ. ՅՈՎԻԹԵԱՆ ՄԱՒԱ-

ԹԵԱՆՅ ԱՄՄԵԼԵՅԻ ՍԵՅԱԳ

ՄԱԿԱՆՈՒԱՆԵԱԼ.



ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մեր Արդոյ հայրենասէր բաժանորդներէն մէկն՝ որ երբեմն վասպուրականիս սիրասուն գիրկն հանգստացած, անոր կաթնորակ ջրերն եւ կենսանորոգ մաքուր օլը ծծելով իւր աւոյգ հասակն 'ի չափ կատարման հասոյց, եւ Այժմ վշտակիր պանդխտութեամբ օտար երկիրներ եւ խորթ հողերու վրայ կարծախէզ կ'Թափառի, իւր սրտի հայրենակարօտ ցաւերն այս սակաւատող չափաբերականիս միջոցաւ բացատրելով, առ մեզ ուղղածէ. եւ կը խնդրէ՝ որ Վասպուրական Արծուոյս միջոցաւ հրատարակեմք 'ի սուղ ինչ մխիթարութիւն ի՛նչ այրած սրտին, եւ չառ իւր կարօտանայր նման վառված գաղթական հայրենասիրաց :

## ԱՆՁՈՒԿ ԼԱՏՐԵՆԵԱՑ

Տուն հայրենի իմ խանձարուր թողեալ 'ի բաց Թափառիմ,  
Մըշտաւըռունջ հառաջանօք աղեկիզեալ խաբշտիմ :  
Իմ հայրենին իցէ՞ արդեօք ինձ վերտին տեսանել,  
Եւ 'ի Վարազ մայրաքաղաք մենաստանաց ծուարիլ :  
Աւաղ հիբոյս զի կորուսի իմ սիրելին ըզ մեծ Վան,  
Չէի արժան կալ խաղաղիկ 'ի Վարազոյ մենաստան :  
Ուրախութիւն գոր ունէի երբեմն 'ի ծոց հայրենեաց,  
Պանդուխտ վիճակս եղնակ զամէն յինէն կորցեալ տարաւ բաց :  
Տէր բարերար արտասուագին պաղատողիս հայցեմ լուր,  
'ի հայրենիս իմ դառնալոյ յաջողութիւն ժրտեմ տուր :  
Իցէ՞ արդեօք քաղցր հայրենի կրկին անդամ դքեզ տեսից,  
Եւ որ ըզքեւ 'ի վանօրայս տենջիւք 'ի յուղտ գընացից :  
Բամեալ բոլոր քո սուրբ վայրաց ո՛հ տարաբախտօ կարօտիմ,  
Եղեմական բղխեալ ջրովդ զտապ իմ բուժել փափաքիմ :

Որչափ 'ի սէրդ թէ հառաչեմ՝ այնքան սաստիկ ճենձերիմ,  
 Վեհ քո անուէն երբ յուշ ամեմ բոլոր անձամբ խկ մաշիմ :  
 Մէր քո մաքուր զիս տոչորէ քոյդ պիպ սիրուն զիս վառէ,  
 Աղի արտօսր որոշնաձեւ զականողիս ողորէ,  
 Բա՛ ձայն վերին ինձ շող լուսոյ ազդէ լըսիկ 'ի բարձանց,  
 Մի հեկեկար խղճուկ ոգի ոչ երկարի այդ քո դարձ :

Մարտիրոս Ս. Փ. ՎԱՆՏԻ

#### ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՑՔ

Առանց զեղխութեան առատաձեռն եղող առաքինիին եւ տեւէն առատութիւնը կը հասնի. բայց կ'ծծի ժլատները՝ ըստ իրենց մտացը, բոլոր կեանքերնուն մէջ ասանկ անխոհեմ վըտանգաւոր պակասութեան մը փորձը սոսմ չըլլալնուն համար, այս բանին ճշմարտութիւնը անհաւանական եւ անհաւատալի կերեւայ իրենց :

Ս'արդս իրեն մէկ հատիկ խնամող եւ ամենաճշմարտ գերադոյն բարեկամ՝ Աստուած ըլլալը ճանչնալէն՝ եւ ասանկ ամենահարուստ թաղաւոր մը թիկունք ունենալէն ետեւ, մարդկանց բնականաբար յողպողդ եւ անհաստատ բարեկամութեանը վրայ իր յոյսը գնելու կարօտ չէ :

Առաքինի մարդը՝ արդարութեան եւ ճշմարտութեան անկործանելի անառիկ պարտալին մէջ ապահով ըլլալուն համար, բնաւ տեղէ մը երկիւղ չկրեր. բայց չար ու մոլի մարդը ամէն բանէ կը վախնայ ու կը դողայ :

Ատիճանաւոր եւ պատուաւոր անձինք ծաղը ընելու հըպարտ մոլութեանը տէր որ ըլլան, իրենց պատիւը եւ ազնուութիւնը կը կորսնցնեն. այս մոլութիւնը երիտասարդները՝ համետաբարոյ անձանց առջեւ զգուելի եւ ատելի կ'ընէ, եւ տղաքներն ալ լիբ ու անառակ որոնք մեծնալէն ետեւ մէյմէկ չարաբարոյ անձինք ըլլալիքնին ամենուն դուշակել կուտան :

Նորս բան կայ աշխարհիս մէջ որ մարդուս երջանկութիւն կրնծայէ առաջին առաքինութիւն . երկրորդ ուսմունք եւ գիտութիւն . երրորդ չափաւորութիւն մըրել . չորրորդ հայրենեաց փառաւորութիւն ու զարգացում :

(!) Բօսանքի համար ծախք ըրած ժամանակդ չափաւոր եղի՛ր՝ եւ աղքատներուն քաշած թշուառութիւնն ալ միտքդ բեր, գթա անոնց վրայ՝ եւ ըրած ծախքէդ մաս մ'ալ բաժին հանէ անոնց՝ վասն զի արժանի են . քան թէ այն քու քսակիդ համար կեղծաւորութիւն ընող սուտակասպաս անձինքը, որոնք քու պարգեւդ անընդունելի շնորհակալութեամբ մը առնելէն ետեւ , այս ինչ յիմարը շողոքորդութեամբ եւ վարպետութեամբ խաբեցինք ըսելով մեկզմէկու կը պարծենան . բայց աղքատին որչափ որ առատաձեռնութիւն ընելով ողորմիս՝ այնչափ ալ յամենայն սրտէ բեզ կօրհնէ, եւ իր բեզի համար առ Աստուած ըրած բարեխօսութեամբը՝ երկնային երջանիկ յոյսերով եւ ուրախութեամբ սիրտդ կը լեցընէ :

(Ե) առայել սորվէ , որ ծառաներուդ ինչ կերպով ծառայելին իմանաս . եւ ուշիմ մտօք կառավարելով ծառայէ անոնց՝ որ չըլլայ թէ քեզ իրօք ծառայեցնեն :

Խօսակցութիւն ըրած ժամանակդ խոհեմութեան կնքա հայրը քովդ կանչէ , եւ արագամտութեան պսակն ալ անոր գլխուն վերայ դիր . որ մտացդ ծնունդներուն ինչ ստուգաբանելը՝ եւ անոնց իւրաքանչիւրին վերայ ինչ անուն դնելը ան աղէկ կը սորվեցնէ քեզի :

Ուրիշին յաջողութեանը կամ որ եւ իցէ բարութեանը վերայ նախանձողը, տեսակ մը դիւահար է , որ այս փորձանքէն զինքը փրկող բժիշկը սէրն է . ապա թէ ոչ՝ այս սեւա մաղձին հետեւողը, որչափ որ ուրիշին մնաս ընելու ջանա՝ այնչափ չլինար, որչափ որ անգութ դահձի մը նման՝ իր չարութեան անհանդատութեան եւ տրտմութեան սրովը իր հոգին ու մարմինը կը վերաւորէ :

## ԱՌԱԿ

ԿՊՊՊ՝ Է՝ ՄԻՆԵՐ :

Չար կատու մի կար ժամանակմ 'ի վեր :  
Որ մեծ ջարդ կուտար խեղճ մկանց վերեւ :  
Դողած սարսափած գազանին ահէն ,  
Աւ չէին կիրնար դուրս ելնել ծակէն :  
Կատուն տեսնալով մկներ դատեցան ,  
Իրեն պաշարն ալ խիստ շատ կբտրեցաւ :  
Ըսկըսեց խորհիլ ասոր ճար դանէ ,  
Թէ ինչպէս մկներ իւրեան ճանկ ճրգէ :  
Կերթայ չար մըտքով անոնց ծակի դէմ ,  
Ներում թողութիւն խնդրել անոնցմէն :  
Արկանչէ մկանց՝ եկէք եղբայրներ ,  
Խնդրեմ ըրած իս ներում չընորհել :  
Ձի սասնիկ ցաւով կըմտնեմ անձար ,  
Իմ չար դործ երով կերթամ 'ի խաւար :  
Մկներ լսելով՝ շատ ուրախացան ,  
Ծակէն դուրս եկան գազին մօտեցան ,  
Կատուն տեսնալով լաւ բանին եկաւ ,  
Շուտ շուտ բըռնելով ըրաւ իւր պաշար :  
Սա է օրինակ խիստ կեղծաւորին ,  
Եւ չարաբարոյ դործոց խարդախին :  
Որ հիւանդութիւն , իւր պատճառ առած  
Մեղոյ կըգոչէ մահէն սարսափած :  
Բայց իւր սրտին է խորհուրդ չար եւ վատ :  
Անմեղին արիւն ծըծել կայ պատրաստ :

ԳԵՂԱՄ Գ • Տ • ԱՔՐԱՀԱՄԵԱՆ , ԱՇԿԷՐՈՒ

ԺԱՌԱՆԳԱԼՈՐՈՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ :

## Գ. ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

## ՅԱՅՏԱՐԱՐ ԱՌԱՋԻԿԱՅ ՏԱՆՏԱԿԱՅ :

Շատ սիրելի էր հայրենասիրտ Արծուղյն իւր սիրածութիւն թերթերովն հայրենի գաւառաց, հողոյն, ջրին, քաղցր օգոյն, վանորէից եւ շինանիտ բնակութեանցը վրայ տեղեկութիւններ տալով բազմաթիւ տարաբնակ հայրենասիրաց սրբազան փափաքը լեցունել . որուն համար իւր մինչեւ հիմայ յարեւելած տասնաթիւ թերթերուն միջոցաւ յօդուած յօդուած ՏԵՍԱՐԱՆՔ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ վերտառութեամբ հրատարակեց եւ խօսեցաւ . Վարագ Մենաստանի Վանտոսպ քաղաքի եւ նոցին մերձակայիցը վրայ, որոնց հին եւ արդի վիճակին վրայօք եղած տեղեկութիւններն՝ ըստ բաւականին բացատրեց . եւ թէ որ անոնցմէ ՚ի զատ մասնաւոր տեղեկութիւնք եւ զխտելիքներ եւս մնացին, զիպօղ ժամանակին առանձին յօդուածով անոնք ալ ծանուցանելու չիպիտի ձանձրանայ :

Իսկ առաջիկայ մետասան եւ երկոտասաներորդ թուերովն ալ ահա պատրաստեցաւ Վանտոսպ աշխարհի բոլոր տեսարանն, Գիւղօրէից, Վանօրէից, Եկեղեցեաց եւ բնակչաց ճիշտ ստորագրական ցուցակն՝ երկու մեծ տախտակներու մէջ առած համառօտակի կերպով ծանուցանել . միանգամայն իւրեանց հին անուանակոչութիւնն եւս կարելի եղածին չսփ զանց չնելով :

Ո՛ր անտոսպ աշխարհի այս ճիշտ վիճակագրական տեղեկութիւնը, հանգուցեալ Սրբաշնակատար Ներսէս Ե. կաթօղիկոսի հարկսօրեալ հրամանաւն եղաւ, որ 1853 ին յատուկ

ծանուցական գրութեամբ եւ կրկնակի հարկադրութեամբ հրաման քաւ , Վանայ եւ Աղթամարու վիճակի հանգուցեալ Տէր Գաբրիէլ վիճակակալ Եպիսկոպոսին , որ նոյն երկու վիճակաց բոլոր Հայ ժողովրդեան ճիշտ թիւն որդին հօրմէն առնելով ականէ յանուանէ հասարակարար ծանուցանէ ինքեան :

Արդ՝ նոյն հանգուցեալ Տ. Գաբրիէլ Եպիսկոպոսն ալ , այս հարկադրեալ հրամանս քաւ արժանոյն պսակուելու համար՝ յանձնեց իւր ձեռնասուն որդեգիր Տ. Գէորգ գիտնական վարդապետին , որն որ ամենայն փութով ձեռնամուխ եղած գործն սկսեց եւ ութն ամօրեայ միջոց մեծ աշխատութեամբ կարելի եղածին չափ լրացոյց :

Այս թանձր գրուածոյս մէջ կ'պարունակի Վան քաղաքի եւ անոր իշխանութեան տակը եղած բոլոր Հայ գիւղորդից եւ գաւառաց միջի եղեալ , Եկեղեցեաց , տներու , ժողովրդոց եւ Բահանայից անուանքն ամբողջապէս . առանց մէկ որբ աղջիկ մը անգամ դուրս ձգելու : Բայց ավստս որ նոյն գաւառաց զրից եւ սահմանաց ստորագրութիւն կը պակասի այն գործէն : Ահա՛ այս ճիշտ մարդաթիւ վիճակագրութենէն հանեցինք , առաջիկայ երկու տախտակաց Հայ ժողովրդոց մարդաթիւն : Տաճիկ եւ քիւրտ ազգերուն լուելով առ այժմը , որոնց ճիշտն գտնելը մեծ աշխատութեան եւ ժամանակաց կարօտ է . բայց այս յայտնի բանէ որ անոնց թէ որքանութիւն եւ թէ յատուկ բնակութեան գիւղերն հայերուն նայելով շատ նուազ են՝ բուն Վանայ բոլորութիւն :

Արդ՝ Վանայ այժմեան կուսակալութեան տակի եղած գեղերուն եւ գաւառաց գիրքն աղէկ մը հասկնալու համար միտ պահելու է , որ Բզնունեաց միջածաւալ ծովն՝ այս երկիրնեքուս իբր կեդրոնն է . որուն չորս բոլորութիւն վայելուչ կերպով բռնած է Վան՝ իւրեան գիւղորդիւք եւ գաւառներովը այսպէս :

Նախ ինքն Վան քաղաք նոյն Բզնունեաց ծովու ճիշտ յաբեւեղակողմն լինելով՝ ունի անմիջապէս իւրեան հետը խօսող

76 հատ մեծ եւ փոքր հայաբնակ քիւղեր, որոնց բաժիններու զիւրք դէպի հիւսիսային Արեւելք տարածուած է : Եւ իւրաքանչիւր գիւղ ունի մէկ յատուկ հայ լշխան, որուն տեղաջիւր ( Ռէիլ ) կ'սեն եւ իւրեանց ամէն մէկ գործ անմիջապէս վանայ ժողովով կ'տեսնուի : Ասոնցմէ ետեւ կուգան այն առանձին գաւառները՝ որոնց շատը յատուկ Ոստիկաններ ( Մի-փի-լ ) ունին եւ մեծ գործերու համար միայն կ'պարտաւորին մեծ կուսակալին ատեանը ելնել :

Ա. Դաւառ Բերկրի . որ բաւ հնոց ( Ա-բէրանի ) վանայ հիւսիսային կողմն կիյնայ 15 ժամ հեռի . ունի 6 հայաբնակ գիւղ եւ շատ մը առատարեր արտօրայք :

Բ. Ալանց որ է ( Արճիւշի-Պի ) . որ կ'պարուենակէ իւր մէջ նախնի ( Քաջբէր-նի ) եւ ( Աղի-Պի ) գաւառաց մասունքներն ալ . Բզնունեաց ծովու հիւսիսակողմն է՝ վանէն 18 ժամ հեռի : ունի 24 քիւղ :

Գ. Ըրծկէ . ( Բշնունեաց ) գաւառի եթէ ոչ ամբողջն՝ գոնեա մէկ մասն կարէ համարուիլ . ունի այժմ 17 քիւղ :

Դ. Խարապաշէհիր . որ է ( Խլաթ ) հին անուանի մայրաքաղաքն է եւ ունի իւր շրջայկայքն 12 քիւղ : Այս Գ. եւ Դ. երկու գաւառս հոմանուն ծովուն բոլոր հիւսիսակողմով արեւմտակողմն ալ պատեցնուն համար եւ բուն Բշնունի նախարարութեան երկիրներն լինելուն համար՝ ( Բշնունեաց ) գաւառ կ'սուէր 'ի հնումն . որուն համար ալ ծով ( Բշնունեաց ) :

Ե. Կարճկան . որ է ( Կարդի ) ծովու արեւմտակողմն կիյնայ վանէն 24 ժամ հեռի : ունի 9 քիւղ :

Զ. ( Սիլ ) Այս գաւառ շատ մեծ է եւ իւրեան հին անունն ալ իբր հայրենի անգին աւանդութիւն մը անկորուստ եւ անփոփոխ պահած է . ունի այժմ 52 հայաբնակ քիւղ Բըշնունեաց ծովու հարաւային արեւմտակողմն կիյնայ . վանէն 20 ժամ հեռի :

Է. Հիզան ( Սասնայ ) գաւառի հարաւային արեւելեան կողմն է՝ Տիգրիս գետի ճիւղերուն մէջն իբր միջագետք :

Վանէն 32 ժամ հեռի, ունի 44 գիւղ :

Ը. Կարիառ. գուցէ վերոյդրեալ գաւառներէն մասն կը տրուած եւ նոր անուն մը ստացած լինի . Վանէն 20 ժամ հեռի է, եւ 20 գիւղ ունի :

Թ. Գաւառ. որ է ( Ռշրո-նի ) Աղթամարու գիմաց ծովու հարաւային ափանց կից է . Արտօս լեռան մէջերը Վանէն 10 ժամ հեռու, 22 գիւղ ունի :

Ժ. ( Ռսրան ) եւ ( Հայոց խոր ) իւրեանց նախնական առնուելու անկորուստ մնացած է . որ ( Ռշրո-նի ) եւ ( Տոթ ) գաւառաց մէջ տեղն է . ծովու հարաւային արեւելեան կողմն երկնցած . եւ Արտօս լեռան հիւսիսային ոտերը շրջապատած . Վանէն 5 ժամ հեռի է, ունի 32 գիւղ :

ԺԱ. Շատախ կամ Բեամդաշտ . Հայոց ճորոյ եւ Ռստանայ ետեւն է , Արտօս լեռան հարաւային մէջեր . Վանէն 18 ժամ է, ունի 45 գիւղ :

ԺԲ. Եօրառուղ . ( Անյէ-այեայ ) գաւառն է . 15 ժամ Վանէն հեռու . 11 գիւղ ունի :

ԺԳ. Սահմուանք . արեւելեան կողմն՝ Պարսից սահմանին մօտ է . Վանէն 9 ժամ հեռու : Գուցէ տփկայ բլրայ Եղեշէի եւ հին պատմագրաց ( Զալէ-անդ ) գաւառ ըստւոմը կամ առնոր մէկ մասն : Այս վերջին գաւառիս 4 գիւղի մարդ աթիւն միայն ունիմք . մնացելոցն կ'պակասի վերոյդրեալ վիճակագրութենէն :

( Մնայեալը Մի-ս Թ-ով ) :

## ԱՆՁՆԱՆՈՒԷՐ ԳՈՐԾԱՍԱԼԷՔ.

### ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ.

ՎԱՆ, Մկրտիչ Տ. Ատոմեան 'ի գրանոցի Վասպուրական  
Արծուոյն :

ԱԱՐԻՆ, Խաչատուր Խան Տ, 'Երրիսեանց եւ միանգամայն  
գործակալ Տարօնոյ եւ Ռուսաստանի Հայոց :

ԲԱՂԷՇ, Մ, Ղարիպճան Աղա Մ, Շողիկեանց :

ՏՐԱՊԻԶՈՆ, Աղաճան Աղա Յովհաննիսեան :

ՊՕԼԻՍՊ, Յակովբ Աղուանեան Վանկցի 'ի Պալմաճի Խան

ՉՄԻՒՌԻՆ, Պ, Սարգիս Տէր Մարգարեան Վանանդեցւոյ :

ԲԵՐԻԱ, Յովհաննէս Աղա Միսաբեան :

ՍԱԼԱՄԱՍ, Յակովբ Միրզայեան Մէլիք Յակովբեանց. մի-  
անգամայն գործակալ Պարսկաստանի Հայոց :

---

### ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ի Վան, 'ի Վարին, 'ի Մուշ, 'ի Բաղէշ, 'ի Տրապիզոն 2 ու կէս  
Օսմանցի քսան ղուրուշնոց արծաթ Մէճիաիէ :

Ի Պօլիս, 'ի Չմիւռլին, 'ի Բերիա, երեք արծաթ քսան  
ղուրուշնոց Մէճիաիէ :

Ի Ռուսաստան եւ 'ի Պարսկաստան, այսինքն 'ի Տփլիս, յԱ-  
ղէքսանդրպօլ, 'ի Դավլէժ եւ այլն, չորս արծաթ Մանէթ :

Գին 'միոյ տետրակի 6 ղուրուշ : Ճանապարհին ծախքը  
Խմբագիրը պիտի վճարէ :

ԲՈՎԱՆԻՒԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՍ ԱՍՏՈՒԱՃՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ՀԱՐՑ

Եւելի Կոչեայի Ընկեր Աստուածաբան Հայոց : . . . 279

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ ՀԱՅՐԵՆԱՇԷՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ

Երեւոյ Արարչի Արդիւնի Բարեկրօն է- Պանծալի  
Թագաւոր Հայոց : . . . 286

ԲՈՒՐԱՍԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ

Զոր Ինչ յերմանէ ոչ լնոյն է- Կնչեայէ : . . . 293

Առաջի . Սիւսի է- Բաշէ : . . . 296

ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Պեարոս Պէյ Մաւթեանց “ Բնար Հայաստանի ” : 297

Անչոյ Հայրենեայ : . . . 299

Բարոյական Առաջ : . . . 300

Կապոս է- Միւնի : . . . 302

ՏԵՍԱՐԱՆԻ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀԱՅ

Յայտարար առաջիկայ Կաթակայ : . . . 303